



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

Ա Շ Խ Ա Տ Ա Կ Ա Ր Գ Ա Յ Ի Ն Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«ՀԱՅԱՍՏԱՆ» ԴԱՇԻՆՔԻ, «ԶԱՐԹՈՆՔ» ԱԶԳԱՅԻՆ ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ, «ՀԱՅՈՑ ՀԱՅՐԵՆԻՔ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՎ «ՊԱՏԻՎ ՈՒՆԵՄ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՇԻՆՔԻ ԴԻՄՈՒՄՆԵՐԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 27-Ի՝ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 20-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՆ ԱՄՓՈՓԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԹԻՎ 184-Ա ՈՐՈՇՄԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՎԵՃԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ՄԻԱՎՈՐՎԱԾ ԳՈՐԾՈՎ ԴԻՄՈՂ «ՀԱՅԱՍՏԱՆ» ԴԱՇԻՆՔԻ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ՝ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՊԱՀԱՆՋԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՄԻՋՆՈՐԴՈՒԹՅՈՒՆԸ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՌՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Սահմանադրական դատարանը, քննության առնելով «Հայաստան» դաշինքի, «Զարթոնք» ազգային քրիստոնեական կուսակցության, «Հայոց Հայրենիք» կուսակցության և «Պատիվ ունեմ» կուսակցությունների դաշինքի դիմումների հիման վրա՝ ՀՀ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2021 թվականի հունիսի 27-ի՝ «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի 2021 թվականի հունիսի 20-ի արտահերթ ընտրությունների արդյունքներն ամփոփելու մասին» թիվ 184-Ա որոշման հետ կապված վեճի վերաբերյալ՝ միավորված գործով դիմող «Հայաստան» դաշինքի կողմից ներկայացված՝ տեղեկատվություն պահանջելու վերաբերյալ միջնորդությունը, **Պ Ա Ր Ձ Ե Ց .**

1. 2021 թվականի հուլիսի 7-ին Սահմանադրական դատարան է մուտքագրվել «Հայաստան» դաշինքի կողմից ներկայացված միջնորդությունը՝ սույն միավորված գործով ՀՀ վարչապետի աշխատակազմից «2021 թվականի մայիսի 10-ից մինչ օրս տրամադրված լրացուցիչ աշխատավարձի (հավելում, պարգևատրում և այլն), ինչպես նաև դրամական օգնություններ հատկացնելու մասին», և ՀՀ ազգային անվտանգության ծառայությունից 109.618 քաղաքացու «չգործող» անձնագրերի և անձանց Հայաստանի

Հանրապետությունում գտնվելու կամ չգտնվելու հանգամանքի վերաբերյալ տեղեկատվություն պահանջելու մասին»:

2. Դիմողի համոզմամբ «Հայաստան» դաշինքի կողմից ներկայացված դիմումում վկայակոչված տասներկու խումբ ընտրախախտումներն անմիջականորեն վերաբերում են տարբեր պետական մարմինների իրավասությանը:

Դիմողը գտնում է, որ գործադիր իշխանության մարմինների, այդ թվում՝ մարզպետների կողմից տրամադրված դրամական միջոցների օգնությունները, վարչական ռեսուրսի օգտագործումը, ինչպես նաև պարգևավճարների վերաբերյալ ամբողջական տեղեկատվությունը կարող է տրամադրել ՀՀ վարչապետի աշխատակազմը:

Դիմողի պնդմամբ՝ «Քվեարկությանը մասնակցած 109,618 ՀՀ քաղաքացու դեպքում անձնագիրը մուտքագրվել է մասնագետի կողմից ստեղծաշարով տեխնիկական սարքավորման մեջ ներմուծելու արդյունքում»: Դիմումի 9-րդ կետում ներկայացվում է «չգործող» անձնագրերի խնդիրը, և որպես ռիսկ արձանագրվում է նշված անձանց առհասարակ Հայաստանի Հանրապետությունում չգտնվելու հանգամանքը:

3. Ուսումնասիրելով ներկայացված միջնորդությունը՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ այն ենթակա է **մերժման՝ հետևյալ պատճառաբանությամբ.**

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Սահմանադրական դատարանը, իսկ գործը դատաքննության նախապատրաստելու կապակցությամբ՝ նաև գործով զեկուցող դատավորը Սահմանադրական դատարանի նախագահի գիտությամբ իրավասու են պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից, դրանց պաշտոնատար անձանցից պահանջելու փաստաթղթեր, տեղեկություններ և այլ նյութեր, փորձաքննություններ, բացառությամբ իրավունքի հարցերով փորձաքննությունների, իսկ ֆիզիկական և իրավաբանական անձանցից՝ նրանց տրամադրության տակ գտնվող նյութեր:

Սահմանադրական դատարանը, քննության առարկա դարձնելով ներկայացված միջնորդությունը, արձանագրում է, որ դիմողի կողմից բավարար կերպով չի հիմնավորվել ՀՀ վարչապետի աշխատակազմից պահանջվող տեղեկատվության՝ սույն գործի քննության համար անհրաժեշտությունը, միջնորդությամբ պահանջվող տեղեկատվու-

թյան ու սույն գործի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքների միջև պատճառահետևանքային ուղղակի կապ չի մատնանշվել: Դիմողի նշած կասկածները հիմնված են սուկ ենթարությունների և պահանջվող տեղեկատվության հնարավոր ապացուցողական նշանակության վրա:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց** .

«Հայաստան» դաշինքի, «Զարթոնք» ազգային քրիստոնեական կուսակցության, «Հայոց Հայրենիք» կուսակցության և «Պատիվ ունեմ» կուսակցությունների դաշինքի դիմումների հիման վրա՝ ՀՀ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2021 թվականի հունիսի 27-ի՝ «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի 2021 թվականի հունիսի 20-ի արտահերթ ընտրությունների արդյունքներն ամփոփելու մասին» թիվ 184-Ա որոշման հետ կապված վեճի վերաբերյալ» միավորված գործով դիմող «Հայաստան» դաշինքի կողմից ներկայացված՝ տեղեկատվություն պահանջելու վերաբերյալ միջնորդությունը մերժել:

**ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՆԱԽԱԳԱՀ**



Ա. ԴԻԼԱՆՅԱՆ

13 հուլիսի 2021 թվականի
ՍԴԱՌ-152